

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՈՒՂԵՐՉ**

ՄԱՍ I

Երևանի քաղաքապետի զեկույցը 2010 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Երևանի զարգացման ծրագրերի նախագծերով նախատեսված գերակայությունները և առկա ռեսուրսները, 2010 թվականին քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու մայրաքաղաքի բնակչության կենսապայմանների բարելավմանն ու բարեկեցիկ և հարմարավետ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանն ու ենթակառուցվածքների զարգացմանը:

Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններն ապահովելու նպատակով 2010 թվականին առաջնահերթ կլինեն՝

1. տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության մասնակցությունը խթանելու նպատակային տնտեսական և սոցիալական քաղաքականության միջոցով,

2. Երևանի տարածական համաչափ զարգացումը և պլանավորումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,

3. կառավարման համակարգի բարեփոխումները և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը՝ այդ նպատակով իրավական դաշտի կատարելագործումը, համակեցության և համաքաղաքային կանոնների ընդունումն ու ներդրումը,

4. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից բխող՝ Երևանի բնակչության պաշտպանության և անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովումը,

5. քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը,

6. գործարարության և ներդրումային միջավայրի բարելավումը,

7. Երևանի ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը,

8. մայրաքաղաքի ջրամատակարարման, աղբահանության, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման, բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման ոլորտներում իրական բարեփոխումները և նախատեսված ծրագրերի արդյունավետ

իրականացումը, բակային տարածքների բարեկարգման միջոցառումների շարունակականությունը,

9. Երևան քաղաքում ուղևորատար տրանսպորտի զարգացման ռազմավարության ներդրումը,

10. Երևանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության ապահովումը, այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը՝ նաև մասնավոր հատվածի մասնակցությամբ՝ ուղղված հաշմանդամներին, ծնողագուրկ երեխաներին, բազմազավակ և անապահով ընտանիքներին ու փախստականներին,

11. մայրաքաղաքի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային քաղաքականության իրականացումը, կրթական համակարգի վերակառուցումը և համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը, կրթության որակի էական բարելավումը և կրթության հասանելիության մակարդակի բարձրացումը՝ բնակչության անապահով խմբերի համար,

12. գիտական ներուժի և ինովացիոն ծրագրերի ներգրավումը կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ դրանց արդիականացումն արդյունավետ ապահովելու նպատակով,

13. քաղաքաշինության հարատև զարգացումը, ներառյալ՝ ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և նպաստումը բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը, քաղաքաշինական ոլորտում գործարար ակտիվության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը,

14. առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը,

15. սփյուռքի հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպումը և զբոսաշրջության զարգացումը:

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, հավաստիությունն ու հստակությունը:

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով – 52,039,101.1 հազ. դրամ,

ծախսերի գծով - 52,839,101.1 հազ. դրամ,

դեֆիցիտը (պակասուրդը) - 800,000 հազ. դրամ:

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 52,039,101.1 հազ. դրամի չափով, ինչը շուրջ 2.6 անգամ ավել է Երևան քաղաքի ավագանու 06.07.2009թ. հ.2-Ա որոշմամբ նախատեսված Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեի ծրագրված եկամուտներից: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն Երևանի քաղաքապետի կողմից լիազորությունները ստանձնելու օրվանից հետո 2009 թվականի մնացած ժամանակահատվածում քաղաքապետարանը շարունակելու է իրականացնել պետական բյուջեով քաղաքապետարանին նախատեսված ծրագրերը որպես պետական կառավարման մարմին, իսկ 2010 թվականին դրանց հիմնական մասը սուբվենցիաների և պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացումների տեսքով ներառվել են նախագծում որպես եկամուտներ:

Հաշվի առնելով նշվածը, նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի առանձին եկամտատեսակների վերլուծությամբ:

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտները և տուրքերը 2010 թվականի համար նախագծով ծրագրվել են 9,949,590.0 հազ. դրամի չափով կամ 2009 թվականի համար հաստատված ցուցանիշից և սպասվող կատարողականից 1,880,880.9 հազ. դրամով կամ 23.3% ավել:

ա. Հարկային եկամուտները ծրագրվել են 8,145,840.0 հազ. դրամի չափով կամ 2009 թվականի համար հաստատված (ճշտված) ցուցանիշից 1,675,326.8 հազ. դրամով ավել, որից.

- գույքահարկը նախագծով նախատեսվել է 7,446,440.0 հազ. դրամ կամ 2009 թվականի հաստատված ցուցանիշից և սպասվող կատարողականից 1,621,640.0 հազ. դրամով կամ 27.8%-ով ավել:

- հողի հարկը ծրագրվել է 699,400.0 հազ. դրամ կամ 2009 թվականի հաստատված ցուցանիշից 53,686.8 հազ. դրամով ավել:

2010 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են հիմքում ունենալով 2009 թվականի հավաքագրման սպասվող կատարողականը, վարչարարական և հետևողական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերը: Հարկային եկամուտների կանխատեսվող աճը պայմանավորված է մաս գույքային հարկերի հաշվառման շտեմարանների ճշտումների արդյունքում լրացուցիչ հարկվող օբյեկտների ընդգրկմամբ շտեմարան:

բ. Տեղական տուրքերը 2010 թվականի համար նախագծում ծրագրվել են 1,363,750.0 հազ. դրամի չափով կամ 2009 թվականի հաստատված ցուցանիշից 205,554.1 հազ. դրամով (17.74%-ով) ավել: Տեղական տուրքերի կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար նախատեսված տուրքը՝ 56.7% (775,400.0 հազ. դրամ) և ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար նախատեսված տուրքը՝ 17.6% (239,800.0 հազ. դրամ), որոնց երկուսի գծով էլ նախատեսվել է նախորդ տարվա համեմատ շուրջ 20% աճ:

Տեղական տուրքերի գծով աճը պայմանավորված է ինչպես տեղական տուրք վճարող տնտեսվարող սուբյեկտների փաստացի գույքագրմամբ, այնպես էլ դրույքաչափերի ավելացմամբ՝ ըստ գոտիների դասակարգմամբ:

գ. Համայնքի բյուջե վճարվող տեղական տուրքերը 2010 թվականի համար նախագծով ծրագրվել են 440,000.0 հազ. դրամ, որից

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից 60,000.0 հազ. դրամ,

- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 380,000.0 հազ. դրամ:

Հաշվի առնելով նշված եկամտատեսակներով նախորդ տարիների փաստացի կատարողականները և միտումները, 2009 թվականին սպասվող կատարողականը, 2010 թվականի համար պետական տուրքերի գծով աճ չի նախատեսվել:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողով ներկայացված 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ 2010 թվականին նախագծով ծրագրվել է 15,525,502.5 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ինչը 5,986,091.6 հազ. դրամով ավել է 2009 թվականի հաստատված ցուցանիշից: Մասնավորապես՝

- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները նախատեսվել են 9,092,668.7 հազ. դրամ կամ 2009 թվականի հաստատված ցուցանիշից 378,966.0 հազ. դրամով ավել:
- Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարները նախատեսվել են 62.5 հազ. դրամ՝ 2009 թվականին 2,682.2 հազ. դրամի դիմաց:
- Պետական բյուջեից ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 6,432,771.3 հազ. դրամ: 2009 թվականին նման հատկացումներ նախատեսված չեն եղել:

1.3) Այլ եկամուտներ.

2010 թվականին նախագծով այլ եկամուտները ծրագրվել են 26,564,008.2 հազ. դրամ կամ 2009 թվականից շուրջ 13 անգամ ավել, որից.

- շահաբաժինների գծով՝ 167,000.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները:
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները՝ 642,362.0 հազ. դրամ՝ 2009 թվականին նախատեսված 644,015.6 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով հաշվառման ճշգրտումը և 2009 թվականին սպասվող կատարողականը,
- այլ գույքի վարձակալությունից մուտքեր՝ 182,429.9 հազ. դրամ՝ 2009 թվականի 91,827.5 հազ. դրամի դիմաց.
- համայնքի սեփականություն հանդիսացող ապրանքների վաճառքից մուտքեր՝ 20,000.0 հազ. դրամ: 2009 թվականին նշված եկամտատեսակով մուտքեր չեն նախատեսվել:
- տեղական վճարների գծով 71,900.0 հազ. դրամ՝ 2009 թվականի 68,625.3 հազ. դրամի դիմաց,
- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճարների գծով 150,000.0 հազ. դրամ՝ 2009 թվականի նույն ցուցանիշի դիմաց՝ հաշվի առնելով սպասվող կատարողականը,

- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով՝ 100,500.0 հազ. դրամ 2009 թվականի 71,930.0 հազ. դրամի դիմաց,

- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով 1,245,624.5 հազ. դրամ՝ 2009 թվականին նախատեսված 400,791.2 հազ. դրամի դիմաց:

2009 թվականին մի շարք հիմնարկներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպվելու արդյունքում նախագծով 2010 թվականին չեն ներառվել նրանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճաները, որոնք Երևան քաղաքի 2009 թվականի բյուջեով նախատեսված էին:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 52,839,101.1 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 90.94%-ը կամ 48,054,486.5 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 4,784,614.6 հազ. դրամը կամ 9.06% ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսերին (ֆոնդային բյուջե):

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ծախսային մասը շուրջ 2.7 անգամ ավել է 2009 թվականի բյուջեի ծախսային մասից և կազմվել է ծրագրային սկզբունքների հիման վրա:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) տեսակարար կշիռը կազմում է 42.4%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերին՝ 10.4%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերը 33.5%:

Նախագծի վարչական մասում նախատեսվել է պահուստային ֆոնդ 3,652,742.4 հազ. դրամի չափով, որը կազմում է վարչական եկամուտների 7.17%-ը, որից 2,884,614.6 հազ. դրամ, նախագծով նախատեսվում է հատկացնել ֆոնդային մաս:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծով ծրագրավորվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով ծախսերը նախագծում ծրագրավորվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին վերապահված

լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 4,887,045.8 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի 9.2%-ը, ինչը 2009 թվականի հաստատված ցուցանիշի հետ համադրելի չէ, քանի որ քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների պահպանման ծախսերը 2009 թվականին ֆինանսավորվում էին ՀՀ պետական բյուջեից: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը 2,648,524.0 հազ. դրամ, ինչը ծրագրավորվել է հիմք ընդունելով 2009 թվականի հաստատված հաստիքացուցակը և աշխատավարձերի բարձրացումներ չեն նախատեսվել: Աշխատավարձի ֆոնդի 10%-ի չափով նախատեսվել է նաև պարգևատրման ֆոնդ՝ աշխատողներին խրախուսելու նպատակով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և ծրագրվել են 481,340.0 հազ. դրամի չափով: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են նախորդ տարիների փաստացի և 2009 թվականին ապահովող ծախսերի ծավալների միջին ցուցանիշներով և հաստատված ամիսներով: 2009 թվականի սակագների փոփոխությունը առաջացրել է 2010 թվականի ծրագրավորված ցուցանիշների որոշակի աճ: Կոմունալ ծառայություններ ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման ինչպես նաև վարչական շենքերի աղբահանման և միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 24,415.1 հազ. դրամի չափով: 2009 թվականի հաստատված ցուցանիշի նկատմամբ ավելացումները պայմանավորված են հիմնականում սակագների փոփոխությամբ: Կապի ծառայությունները հաշվարկվել են 24.08.2007 թվականի «Արմենթել» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հ. 340-Ն որոշման (քաղաքային ցանցի մասով), ինչպես նաև միասնական և լիմիտավորված մոտեցման հիման վրա (նոր հատուկ սակագնային փաթեթով բջջային ցանցի մասով) և ծրագրվել է 169,768.5 հազ. դրամ: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 141,500.0 հազ. դրամի չափով, որի մեջ հիմնական մասը կազմում է քաղաքապետարանի ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքը, վարորդի տրամադրումը և այլն: Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» հ. 235-Ն որոշմամբ սահմանված նորմերով և նախորդ տարիների փաստացի քանակներով և ծրագրվել է 92,000.0 հազ. դրամի չափով:

Նշված ծրագրով հաջորդ տեսակարար կշիռ ունեցող ծախսը նախատեսվել է ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար, որը ծրագրվել է 88,204.0 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը, ընթացիկ այլ աշխատանքները և այլն: Գրասենյակային նյութեր և հագուստ ծախսերը ծրագրվել են 86,473.3 հազ. դրամ և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գուտ գրասենյակային նյութերը:

Մեքենաներ և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 115,735.0 հազ. դրամ, որը ներառում է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, իսկ կառուցվածքային ստորաբաժանումների մասով նաև ավտոմեքենաների պահպանումը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 183,078.5 հազ. դրամի չափով և հաշվարկվել են քաղաքապետարանի ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման դեպքերով: Տրանսպորտային սարքավորումների գծով ծրագրվել է 112,000.0 հազ. դրամ՝ անհրաժեշտ ծառայողական ավտոմեքենաների ձեռքբերման համար: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 115,211.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվել է հիմնականում կառուցվածքային և առանձնացված (այդ թվում նոր ստեղծված) ստորաբաժանումներն ապահովել անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Այս ծրագրով նախատեսվել է նաև մի շարք մեծ տեսակարար կշիռ ունեցող ծախսեր, որոնց ծրագրավորման համար հիմք են ընդունվել ինչպես գործող օրենսդրության պահանջները այնպես էլ նախորդ տարիների փաստացի կատարված ծախսերը:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 462,021.3 հազ. դրամ, որից 347,760.0 հազ. դրամը Փ. Բուզանդի 1/3 հասցեի շենքի նորոգման և ջեռուցման համակարգի կառուցման համար, իսկ մնացած մասը վարչական շրջանների վարչական շենքերի նորոգման համար:

3.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման ծրագրով ծրագրվել է 41,695.6 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

4. Նախագծային ածխատանքներ ծրագրով նախատեսվել է 250,000.0 հազ. դրամ 2011 թվականի բյուջեն ծրագրավորելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում ծրագրով նախատեսվել է 110,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված ըստ տարիների կատարված վերլուծության հիման վրա ճշգրտման համար:

6. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ ծրագրով նախատեսվել է 50,500.0 հազ. դրամ պետական տուրքերի վճարման համար՝ հիմնականում պայմանավորված հարկային եկամուտները դատական կարգով գանձելու համար:

7. Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրով նախատեսվել է 154,375.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման անհրաժեշտությամբ:

8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զորակոչի կազմակերպմանն աջակցություն ծրագրերով նախատեսվել են համապատասխանաբար 3,500.0 հազ. դրամ և 12,442.0 հազ. դրամ, ինչը պայմանավորված է գործող օրենդորությամբ նախատեսված նվազագույն աջակցությունն ապահովելով և շուրջ 3,6 անգամ պակաս է 2009 թվականի հաստատված ցուցանիշից:

9. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրով նախատեսվել է 4,200.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը:

10. Ոռոգման համակարգի վերանորոգում և շահագործում ծրագրով նախատեսվել է 207,000.0 հազ. դրամ՝ նոր ստեղծվող կանաչ տարածքներում ոռոգման ցանցի ապահովման համար՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը:

11. Ասֆալտ քետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-քետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրերով նախատեսվել են 2,920,996.8 հազ. դրամ և 1,329,073.9 հազ. դրամ: Նախատեսված ընդհանուր 4,250,070.7 հազ. դրամից 3,284,000.0 հազ. դրամը նախատեսված է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով որպես նպատակային հատկացում (սուբվենցիա):

12. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով նախատեսվել է 27,000.0 հազ. դրամ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման նպատակով:

13. Թեքահարթակների կառուցում ծրագրով նախատեսվել է 11,130.2 հազ. դրամ՝ ստորգետնյա անցումներում սայլակավոր քաղաքացիների համար թեքահարթակների կառուցման նպատակով և պլանավորվել է համապատասխան նախահաշվային փաստաթղթերի հիման վրա:

14. Հենապատերի վերանորոգում ծրագրով նախատեսվել են 202,419.2 հազ. դրամ՝ համապատասխան նախահաշվային արժեքներով: Առկա վթարային հենապատերից ընտրվել են առաջնայինները:

15. Հետիոտն անցումների կառուցում ծրագրով նախատեսվել է 307,096.1 հազ. դրամ, որից 250,000.0 հազ. դրամը Բաղրամյան-Օրբելի և Թումանյան-Խանջյան խաչմերուկներում, իսկ 57,096.1 հազ. դրամը Բաբաջանյան փողոցում վերգետնյա հետիոտն անցումների կառուցման համար:

16. Կամրջային կառուցվածքների վերանորոգում ծրագրով նախատեսվել է 1,703,278.5 հազ. դրամ՝ Գ. Նժդեհի ուղեծրի 2009 թվականին սկսված վերակառուցման աշխատանքները ավարտին հասցնելու համար: Գումարը նախատեսվել է լրամշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա:

17. Կամրջային կառուցվածքների պահպանում ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի կամուրջների շահագործման համար անհրաժեշտ սպասարկման աշխատանքների նպատակով, ինչն ապահովում է կամուրջների երկարաժամկետ շահագործումն առանց նորոգման:

18. Հրագդանի կիրճի բարեկարգում ծրագրով նախատեսվել է 210,000.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով, ինչը նախատեսում է բարեկարգել կիրճի այն հատվածները, որոնք շրջապատված չեն օբյեկտներով՝ մնացած հատվածները բարեկարգելով օբյեկտների սեփականատերերի միջոցներով:

19. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում նախատեսվել է 3,847,426.0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Ծրագիրը նախատեսում է Թբիլիսյան և Ծիծեռնակաբերդի խճուղիների ամբողջական վերակառուցման և բարեկարգման աշխատանքները:

20. Ստորգետնյա ավտոկայանտեղերի կառուցում ծրագրով նախատեսվել է 4,259,383.2 հազ. դրամ Ազատության հրապարակում ստորգետնյա ավտոկայանտեղի կառուցման համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի հ. 955-Ա որոշմամբ նախատեսված գործարքը:

21. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 97,331.0 հազ. դրամ՝ բազմաբնակարան շենքերի վերելակների միայն կապիտալ բնույթի աշխատանքների համար:

22. Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների ծառայություններ և «Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ ենթակառուցվածքների նորոգում ծրագրերով նախատեսվել են 1,840,000.0 հազ. դրամ սուբսիդիա և 500,000.0 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագրերը:

23. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 276,000.0 հազ. դրամ սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրավորման հիմքում ընկած է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

24. «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգում ծրագրով նախատեսվել է 93,200.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել տրոլեյբուսների հպակային ցանցի կապիտալ նորոգման, հպակային լարերի փոխարինման և հպակային ցանցի վթարային հենասյունների փոխարինման աշխատանքներ:

25. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 91,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը:

26. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 23,091.9 հազ. դրամ, ինչը ծրագրավորվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների համար, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

27. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ՝ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար: Նախատեսվել է շուրջ 30%-ով պակաս նախորդ տարիներին ՀՀ պետական բյուջեի նախատեսված ցուցանիշից:

28. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհների տեսքով և հաշվարկվել է 2009 թվականի սպասվող կատարողականից ելնելով:

29. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով նախատեսվել են մուտքեր ա) անշարժ գույքի իրացումից 7,759,383.2 հազ. դրամի չափով, որից 6,259,383.2 հազ. դրամը՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի հ. 955-Ա որոշմամբ նախատեսված գործարքներից, 1,000,000.0 հազ. դրամը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշմամբ նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների օտարումից և 500,000.0 հազ. դրամը՝ Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված և շահագործման համար ոչ պիտանի կաթսայատների օտարումից:

բ) Հողի օտարումից 7,000,000.0 հազ. դրամ, որից 5,000,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 2,000,000.0 հազ. դրամը՝ օրինականացված

ինքնակամ կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից:

30. Սանիտարական մաքրում ծրագրով նախատեսվել է 3,233,916.6 հազ. դրամ, որից 3,190,2337 հազ. դրամը՝ սանիտարական մաքրման աշխատանքների համար: Ծրագիրը համարելով գերակայություն 2010 թվականի համար ցուցաբերվել է միասնական մոտեցում 1 քմ.-ի մաքրման արժեքի նկատմամբ՝ համապատասխան հաշվարկների հիման վրա: Ծրագրով նախատեսված գումարից 39,685.4 հազ. դրամը նախատեսվում է որպես դրամաշնորհ տրամադրել Աջափնյակ վարչական շրջանի սանիտարական մաքրում իրականացնող համայնքային կազմակերպությանը՝ ձեռքբերված մեքենաների հետ կապված վարկային պարտավորությունների կատարման համար:

31. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 29,225.8 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով:

32. Կանաչ տարածքների պահպանում ծրագրով նախատեսվել է 998,200.0 հազ. դրամ, որից 958,200.0 հազ. դրամը ներառում է պահպանման ծառայությունները, նյութերը և ոռոգման ջրի արժեքը, իսկ 40,000.0 հազ. դրամը՝ քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերը:

33. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 39,998.4 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար:

34. Հասարակական գուգարանների կառուցում և հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրերով նախատեսվել են համապատասխանաբար 10,785.0 հազ. դրամ և 9,277.4 հազ. դրամ, որը ներառում է Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանում 1 հասարակական գուգարանի կառուցման և ընդհանուր պահպանման և մաքրման աշխատանքները:

35. Կանաչ տարածքների (տնկարկների) հիմնում ծրագրով նախատեսվել է 505,000.0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և բխում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներից:

36. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով նախատեսվել է 255,000.0 հազ. դրամ՝ նախահաշվային արժեքով, ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների շրջակայքը:

37. Աջակցություն համայնքային կազմակերպություններին ջերմոցների կառուցման, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման համար ծրագրով նախատեսվել է 220,000.0 հազ. դրամ, որից 120,000.0 հազ. դրամը 3000 քմ. ջերմոցի կառուցման և 100,000.0 հազ. դրամը կանաչապատման համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումների ձեռքբերման նպատակով:

38. Թափառող կենդանիների վնասագերծում ծրագրով նախատեսվել է 180,000.0 հազ. դրամ և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարողական ցուցանիշներից ելնելով:

39. Ինքնակամ կառույցների քանդում ծրագրով նախատեսվել է 23,622.0 հազ. դրամ այն ինքնակամ կառույցների քանդման և տաղավարների ապամոնտաժման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին:

40. Երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան վթարային շենքերի վերականգնման և ամրացման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 500,000.0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա: Նշված ծրագիրը շարունակական է և նախատեսվում է ավարտել մինչև 2014 թվականը:

41. Զորորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակատարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար շենքերի կառուցում ծրագրով նախատեսվել է 800,00.0 հազ. դրամ՝ 1 շենքի կառուցման համար և ծրագրավորվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա:

42. Համաշխարհային բանկի և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ ջրամատակարարման թվով 3 ծրագրերով նախատեսվել է 6,024,827.3 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն և ծրագրավորվել է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

43. Արտաքին լուսավորության ցանցի հիմնադրուցում ծրագրով նախատեսվել է 292,640.5 հազ. դրամ, որից 200,000.0 հազ. դրամը քաղաքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի նորոգման համար (չլուսավորվող տարածքների), իսկ 92,640.5 հազ. դրամը բակային և միջբակային տարածքների համար:

44. Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 1,696,000.0 հազ. դրամ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացման հաշվին:

45. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 10,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայինության աստիճանի հետազոտումը և ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

46. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 332,004.8 հազ. դրամ՝ տարբեր մոտեցումներով աշխատանքները կազմակերպելու համար (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն): Ծրագիրը շարունակական է և նախատեսվում է ավարտել 3 տարվա ընթացքում:

47. Բակային տարածքների բարեկարգում ծրագրով նախատեսվել է 195,126.4 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից 2010 թվականի համար ընտրված բակերի համար: Ծրագրավորվել է ներկայացված նախահաշիվներին համապատասխան:

48. Վթարային պատշգամբների նորոգում և բազմաբնակարան շենքերի բարեկարգման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 541,685.1 հազ. դրամ, որի շրջանականերում նախատեսվում է ամրացնել վթարային պատշգամբները՝ ըստ ներկայացված նախահաշիվների, ինչպես նաև իրականացնել շենքերի և մուտքերի բարեկարգման, մուտքերի դռների փոխարինման և այլ աշխատանքներ՝ ինչպես աշխատանքների գնման, այնպես էլ համատիրություններին աջակցության տրամադրման միջոցով:

49. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 270,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար: Գումարը նախատեսվել է 2009 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարի չափով, սակայն ավելացվել է շատրվանների քանակը՝ նախկին քաղաքի համայնքների կողմից սպասարկվող շատրվանների մասով:

50. Կոյուղագծի կառուցում ծրագրով նախատեսվել է 270,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ավարտին հասցնել 2009 թվականին սկսված Սիլիկյան թաղամասի կոյուղագծի կառուցման աշխատանքները:

51. Կառուցապատման ներդրումային ծրագրերի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 120,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերը: Նախատեսված գումարը 2009 թվականի համեմատ նվազել է 30,000.0 հազ. դրամով:

52. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 52,037.9 հազ. դրամ, ինչը ներառում է Երևան քաղաքի սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների գուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

53. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման ծրագրով նախատեսվել է 160,000.0 հազ. դրամի դրամաշնորհ, որի շրջանակներում նախատեսվել է շտապ օգնության թվով 8 մեքենաների ձեռքբերում և այդ մեքենաների բուժասրքավորումներով հագեցվածության ապահովում (120,000.0 հազ. դրամ), ինչը կապահովի շտապ օգնության ավտոմոբիլային պարկի 20% թարմացում, ինչպես նաև առաջնային օդակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների արդիականացում (40,000.0 հազ. դրամ):

54. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 61,000.0 հազ. դրամ՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և

նախատեսվում է իրականացնել «Նոր Արաբկիր» ԱԿ ԴՓԲԸ-ի լոկալ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները:

55. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 47,783.6 հազ. դրամ՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված միջոցառումների քանակն ու ծախսերը:

56. Զբոսայգիների և խաղահրապարակների կառուցում և զբոսայգիների և խաղահրապարակների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 115,822.0 հազ. դրամ, որից 99,439.0 հազ. դրամը՝ Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա և Նոր-Նորք վարչական շրջաններում զբոսայգիների և խաղահրապարակների կառուցման նպատակով, իսկ մնացած գումարը ընթացիկ նորոգումների և պահպանման համար:

57. Հեծանվահրապարակի կառուցում ծրագրով նախատեսվել է 2,000,000.0 հազ. դրամ, ինչը բխում է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի հ. 955-Ա որոշմամբ նախատեսված գործարքից:

58. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 257,659.9 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար: Գումարը ծրագրավորվել է 2009 թվականի հատկացված ցուցանիշի չափով:

59. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով նախատեսվել է 121,924.2 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

60. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 69,124.9 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների պահպանման համար և ծրագրավորվել է 2009 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

61. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 386,768.8 հազ. դրամ, որի հաշվարկման հիմքում ընկած է 2009 թվականի նույն միջոցառումների համար սպասվող կատարողականը:

62. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 188,353.2 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

63. Կենդանաբանական այգու հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ: Առկա են ամբողջական հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր,

որոնց շրջանակներում աշխատանքները սկսվել էին դեռևս 2008 թվականին և նախատեսվում է ավարտել մի քանի տարվա ընթացքում:

64. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 69,983.3 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության համերգային կազմակերպությունների սուբսիդավորման համար: Գումարը ծրագրավորվել է 2009 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

65. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 205,721.8 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

66. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 37,527.3 հազ. դրամ այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

67. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 3,565,120.0 հազ. դրամ: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրավորվել է 20.0 հազ. դրամի չափով, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների համար գործող վճարները և երեխաների փաստացի թվի վերաբերյալ կանխատեսումները:

68. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով նախատեսվել է 302,031.0 հազ. դրամ նախադպրոցական հաստատություններում խիստ անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար:

69. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն, երեկոյան ուսուցում, նախնական մասնագիտական կրթություն և նախնական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ ծրագրերով նախատեսվել է 15,370,163.5 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորության ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

70. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 1,450,138.7 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի և արվեստի դպրոցների սուբսիդավորումը և ծրագրավորվել է 2009 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտ դպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

71. Արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում ծրագրով նախատեսվել է 2,500.0 հազ. դրամ՝ սպորտ դպրոցների համար անհրաժեշտ սպորտային գույքի ձեռքբերման համար:

72. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 73,828.3 հազ. դրամ՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

73. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և նախադպրոցական հաստատությունների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է 851,418.0 հազ. դրամ, որի շրջանակներում բացի նորոգումներից որպես գերակայություն նախատեսվում է իրականացնել շենքերի ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքներ:

74. Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 29,879.5 հազ. դրամ և հաշվարկներն իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած հայտերի հիման վրա:

75. Սոցիալապես անապահով երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 4,550.0 հազ. դրամ և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված մմանատիպ ծախսերի հիման վրա:

76. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 32,658.0 հազ. դրամ և հաշվարկվել է 2009 թվականի հաստատված ցուցանիշի հիման վրա:

77. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, հասարակական կազմակերպություններին աջակցություն և սոցիալական ծրագրերին աջակցություն ծրագրերով նախատեսվել է 290,176.5 հազ. դրամ և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

78. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 207,505.8 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 800,000.0 հազ. դրամի չափով պակասուրդ, որը կֆինանսավորվի տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին: Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2009 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո: Միաժամանակ 2009 թվականի բյուջետային տարվա ավարտին բյուջետային պարտքեր չեն նախատեսվում:

Այսպիսով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. եկամուտների գծով՝ 52,039,101.1 հազ. դրամ,
2. ծախսերի գծով՝ 52,839,101.1 հազ. դրամ,

3. դեֆիցիտը (պակասուրդը) 800,000 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---- դեկտեմբերի 2009թ.

N ----- Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 54-րդ, 71-րդ, 72-րդ, 73-րդ, 74-րդ, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ, 32-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ, 34-րդ, 55-րդ և 56-րդ հոդվածներով՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեն՝

ա. եկամուտների գծով՝ 52,039,101.1 հազ. դրամ,

բ. ծախսերի գծով՝ 52,839,101.1 հազ. դրամ,

գ. դեֆիցիտը (պակասուրդը) 800,000 հազ. դրամ:

2) Երևանի 2010 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն հավելված հ.1-ի.

3) Երևանի 2010 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված հ.2-ի.

4) Երևանի 2010 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված հ.3-ի.

5) Երևանի 2010 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված հ.4-ի.

6) Երևանի 2010 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված հ.5-ի.

7) Երևանի 2010 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված հ.6-ի.

8) սույն որոշման հ.6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն հավելված հ.7-ի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆԵՐՆԵՐԻ ԸՍՏ
ՁԵՎԱՎՈՐՍԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվա ծի N	Ընդամենը	(հազար դրամներով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		52,039,101.1	50,939,101.1	3,984,614.6
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	9,949,590.0	9,949,590.0	-
	այդ թվում՝				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	4,743,090.0	4,743,090.0	-
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		4,043,690.0	4,043,690.0	-
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		699,400.0	699,400.0	-
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	3,402,750.0	3,402,750.0	-
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		3,402,750.0	3,402,750.0	-
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	1,363,750.0	1,363,750.0	-
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	1,363,750.0	1,363,750.0	-
	այդ թվում՝				
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար		152,525.0	152,525.0	-
	որից՝				
1133	աա) Հիմնական շինությունների համար		152,525.0	152,525.0	-
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		28,150.0	28,150.0	-
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		16,000.0	16,000.0	-
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		239,800.0	239,800.0	-
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		37,825.0	37,825.0	-
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		62,750.0	62,750.0	-
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		39,300.0	39,300.0	-

Տողի №	Եկամտատեսակները	Հոլվա ծի №	Ընդամենը	(հազար դրամներով)	
				այդ թվում`	
1	2	3	4	վարչական մաս	ֆոնդային մաս
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		1,000.0	1,000.0	-
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		775,400.0	775,400.0	-
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		7,400.0	7,400.0	-
1145	ժա) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		3,600.0	3,600.0	-
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	7146	440,000.0	440,000.0	-
	այդ թվում`				
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր		440,000.0	440,000.0	-
	այդ թվում`				
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		60,000.0	60,000.0	-
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		380,000.0	380,000.0	-
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՄՍԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	15,525,502.5	14,425,502.5	1,100,000.0
	այդ թվում`				
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	14,425,502.5	14,425,502.5	-
	որից`				
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		9,092,668.7	9,092,668.7	-
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		62.5	62.5	-
	այդ թվում`				
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող` ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		62.5	62.5	-
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		5,332,771.3	5,332,771.3	-
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ` ստացված կառավարման այլ մակարդակներից	7332	1,100,000.0	-	1,100,000.0
	այդ թվում`				
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1,100,000.0	-	1,100,000.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	7400	26,564,008.6	26,564,008.6	2,884,614.6
	այդ թվում`				
1320	3.2 Շահաբաժիններ	7412	167,000.0	167,000.0	-
	այդ թվում`				
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (Յ՝Ն՝Ք՝ԱՇԿԵՆ)		167,000.0	167,000.0	-
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	824,791.9	824,791.9	-
	այդ թվում`				

Տողի №	Եկամտատեսակները	Հոդվա ծի №	Ընդամենը	(հազար դրամներով) այդ թվում`	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		642,362.0	642,362.0	-
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		182,429.9	182,429.9	-
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	24,004,192.2	24,004,192.2	-
	այդ թվում`				
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող , այդ թվում` տիրագուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		20,000.0	20,000.0	-
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		23,984,192.2	23,984,192.2	-
1350	3.5 Վարչական զանձումներ	7422	221,900.0	221,900.0	-
	այդ թվում`				
1351	Տեղական վճարներ		71,900.0	71,900.0	-
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		150,000.0	150,000.0	-
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	100,500.0	100,500.0	-
	այդ թվում`				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		100,500.0	100,500.0	-
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	1,245,624.5	1,245,624.5	2,884,614.6
	այդ թվում`				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	2,884,614.6
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված` համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		1,245,624.5	1,245,624.5	-

ԵՐԵՎԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՍԱՍԵՐԻՅ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	(հազար դրամներով) այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	52,839,101.1	50,939,101.1	4,784,614.6
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5,955,637.7	4,898,955.4	1,056,682.3
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	5,349,067.1	4,652,384.8	696,682.3
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	5,349,067.1	4,652,384.8	696,682.3
2130	01	3	0	Ընդհանուր բնույթի ծառայություններ	41,695.6	41,695.6	-
				որից՝			
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	41,695.6	41,695.6	-
2150	01	5	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	360,000.0	-	360,000.0
				որից՝			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	360,000.0	-	360,000.0
2160	01	6	0	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	204,875.0	204,875.0	-
				որից՝			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	204,875.0	204,875.0	-
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	15,942.0	15,942.0	-
				այդ թվում՝			
2220	02	2	0	Քաղաքացիական պաշտպանություն	3,500.0	3,500.0	-
				որից՝			
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	3,500.0	3,500.0	-
2250	02	5	0	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	12,442.0	12,442.0	-
				որից՝			
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	12,442.0	12,442.0	-
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3,483,603.6	5,888,288.7	(2,404,685.1)
				այդ թվում՝			
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	211,200.0	11,200.0	200,000.0
				որից՝			
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	4,200.0	4,200.0	-
2424	04	2	4	Ոռոգում	207,000.0	7,000.0	200,000.0
2450	04	5	0	Տրանսպորտ	17,717,694.9	5,653,996.8	12,063,698.1
				որից՝			
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	14,910,663.9	3,037,996.8	11,872,667.1
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	2,807,031.0	2,616,000.0	191,031.0
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(14,445,291.3)	223,091.9	(14,668,383.2)
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(14,445,291.3)	223,091.9	(14,668,383.2)
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	5,481,403.2	4,892,742.9	588,660.3
				այդ թվում՝			

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում`	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2510	05	1	0	Աղբահանում	3,233,916.6	3,229,919.1	3,997.5
				որից`			
2511	05	1	1	Աղբահանում	3,233,916.6	3,229,919.1	3,997.5
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	29,225.8	29,225.8	-
				որից`			
3531	05	3	1	Օդի աղտոտման դեմ պայքար	29,225.8	29,225.8	-
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,218,260.8	1,633,598.0	584,662.8
				որից`			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,218,260.8	1,633,598.0	584,662.8
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	11,133,194.0	8,990,957.9	2,142,236.1
				այդ թվում`			
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	1,323,622.0	23,622.0	1,300,000.0
				որից`			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	1,323,622.0	23,622.0	1,300,000.0
2630	06	3	0	Ջրամատակարարում	6,024,827.3	6,024,827.3	-
				որից`			
2631	06	3	1	Ջրամատակարարում	6,024,827.3	6,024,827.3	-
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	1,989,390.5	1,696,000.0	293,390.5
				որից`			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	1,989,390.5	1,696,000.0	293,390.5
2650	06	5	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	10,000.0	5,000.0	5,000.0
				որից`			
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	10,000.0	5,000.0	5,000.0
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,785,354.2	1,241,508.6	543,845.6
				որից`			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,785,354.2	1,241,508.6	543,845.6
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	221,000.0	160,000.0	61,000.0
				այդ թվում`			
2710	07	1	0	Թժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	160,000.0	160,000.0	-
				որից`			
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	160,000.0	160,000.0	-
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	61,000.0	-	61,000.0
				որից`			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	61,000.0	-	61,000.0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	3,603,228.5	1,387,406.5	2,215,822.0
				այդ թվում`	-		
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ	2,166,210.1	50,388.1	2,115,822.0
				որից`			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	2,166,210.1	50,388.1	2,115,822.0
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	1,437,018.4	1,337,018.4	100,000.0
				որից`			
2821	08	2	1	Գրադարաններ	257,659.9	257,659.9	-
2821	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	121,924.2	121,924.2	-
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	69,124.9	69,124.9	-
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	675,122.0	575,122.0	100,000.0
2825	08	2	5	Արվեստ	275,660.1	275,660.1	-
